

Զարկի՞ր քընսարիդ հընչուն լարերին,
թող նրանք խօսեն կեանքի ցաւերից.
Լեզու տուր անգամ անխօս քարերին,
Դալուկ դէմքերից վանի՞ր ու թախիծ...
Երգի՞չ—դու կեանքի առաքեալ—զաւակ,
Կեանքը հըրաշունչ երգի է կարծու,
Երգի՞ր, որ լոյսի կայ սուրբ յաղթանակ,
Որ կայ և կը գայ ոսկի առաւօտ...

ԱԼ. ԺԱՄՊՈՒՐԵԱՆ

ՀԱՅ ՀԱՏՈՒԱԾՆԵՐ

Հունգարիայի եւ Տրանսիլվանիայի հայերը: «Հանդէս Ամսօրեայ»-ից (1905 թ., № 1) քաղում ենք հետևեալ տեղե- կութիւնները.

Այլևայլ տեսակ աչքով նայելով ու այլևայլ ակնոցէ դի- տելով՝ «Հունգարիայի և Տրանսիլվանիայի ազգայիններու թիւը թէ՛ կը նուազի և թէ՛ կը բազմանայ, ինչպէս որ դիտողը կառու, կը նայի ու կը զննէ»:

1. Կան՝ որոնք ազգային կը համարին զանոնք միայն, ո- րոնք ազգային հայ արարողութեամբ մկրտուած ու դրոշմ- ուած են:

2. Շատերը՝ ազգային կը համարին զանոնք ալ, որոնք՝ թէպէտ ըստ հայ արարողութեան մկրտուած չեն, որովհետե- չեն գտած ազգային քահանայ որ զիրենք մկրտէ ու դրոշմէ—և կամ չունին յատուկ ազգային եկեղեցի ու ժողովրդապետու- թիւն՝ ուր որ կարենային մկրտուիլ.—սակայն հայ կը համա- րուին, անոր համար, վասն զի իրենց պապերն ու նոյնիսկ ի- րենց ծնողներն ազգային էին, ըստ հայ արարողութեան մկր- տուած: Անուննին ալ աս բանիս վկայ է, ու ամեն ազգային զիրենք հայ կը ճանչնայ:

3. Կան անանկներ ալ, որոնք՝ ազգային կը համարին զա- նոնք միայն, որոնց լեզուն հայերէն է:—Այս իմաստով առ- նելով՝ Հունգարիայի և Տրանսիլվանիայի մէջ բնականապէս շատ թիչ ազգային պիտի ըլլայ. մանաւանդ եթէ նկատելու ըլ- ֆետրուար, 1905.

լանք զանոնք՝ որոնք, ո՞չ ըստ հայ արարողութեան մկրտուած են, և ոչ ալ չորս ծանօթ եկեղեցիներուն իրաւասութեան տակ են.—ուստի անոնց չեն վերաբերիր:

Իշխանութիւնն այս ակնոցէն նայելով Հունգարիոյ և Տրանսիլվանիոյ մէջ՝ միայն երկու հազար հօթը հարիւրէն ըիչ մ'աւելի ազգային կը գտնէ պաշտօնապէս: Աս բանս՝ այսպէս համարելու իրաւունք կը համարի անո՞ր համար, որ նախ՝ հայերէն չեն խօսեր, երկրորդ՝ հայ ծէսով մկրտուած չեն ու երրորդ՝ ասոնք իրենք զիրենք իրրե ազգային անցընել տուած չեն աշխարհագրին մէջ:

«Հաստատութեամբ կրնանք ըսել որ թէ Հունգարիայի և թէ Տրանսիլվանիայի մէջ չկայ քաղաք, գիւղ, աւան, ևայն՝ ուր որ աւելի կամ նուազ ազգային չգիտնուի»:

Յօդուածագիրը ամփոփելով իր ասածները գտնում է որ Հունգարիայի և Տրանսիլվանիայի մէջ խանուազն 10—12,000 հայ պէտք է լինի:

Սուլդանի հայերը: Աֆրիկայի խորքերից, Խարթում քաղաքից, ստացած մի մասնաւոր նամակից հետևեալ հետաքրքրական տեղեկութիւններն ենք քաղում:

«Այսուեղ գտնուող հայերս առ հասարակ 1895—96 թ. թրքական արհաւիրքներէն պրծած և ժամանակ մը Եգիպտոս, անկէ ալ հոս հաստատուածներ ենք: Ընդամենը 50 հոգի հազվա ըլլայ թիւերնիս, և դժբախտաբար ամենքս մէկ տեղ չենք, ցրուած ենք քանի մը քաղաքներու մէջ. այդ անպատճութիւնն է որ արգելք կ'ըլլայ լսարան մը կամ ուրիշ ազգային հաստատութիւն մը հիմնելու համար:

Նիւթական վիճակնիս լաւ է. ամենքն ալ վաճառականութեամբ կ'զրադին, գրեթէ ոչնչով եկածներէն այսօր ամենքն ալ զիրքի տէր եղած են: Այս օրերս հայ երիտասարդ մը ամուսնացաւ հայ օրիորդի մը հետո. ամբողջ հայերս ներկայ գտնուեցանք հարսանեաց հանդիսին և այդ պատեհ առթիւ հանգանակութիւն մը բացինք ո. էջմիածնայ Մայր Աթոռին համար, ներկայներէն ամենքն ալ անխսիր մասնակցեցան. այդ հանգանակութեան արդիւնքը եղաւ 34 եղիպատական ուկի, հանգանակութիւնը դեռ պիտի շարունակենք»:

Կիպրոսի հայերը: «Մուրճում» (1904, № 1, եր. 187, 188) գետեղած համառօտ տեղեկութիւններից մեր ընթերցողը գիտէ, որ այդ կզզու՝ մօտ 283 հազար ազգաբնակութիւնից միայն

562 հոգի են հայեր. այդ ողորմնվի քանակութիւնը, ի հարկէ, անկարող էր ազգային հաստատութիւններ պահպանել: Եւ այդ հաստատուեց այն տիսուր փաստով, որ Կիպրոսի միակ հայկական հաստատութիւնը՝ «Կրթարան-Որբանոցը», ինչպէս իմանում ենք մի մասնաւոր նամակից, հարկադրուած էր փակուել «դրամական անապահովութեան» պատճառով: «Որբանոցի» բոլոր գոյքերը խնամակալութեան հրահանգով փոխադրուած են Քահիրէ (Եղիպտոս): Տեսնենք այդտեղ ևս, մայր երկրից կըտրուած, կարմիր են արմատներ գցել և աճել «ազգային» հաստատութիւնները: Կասկածում ենք...

Տ.

ԹԻՒՐՔԻԱՅԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԸ

Սրանից շուրջ տաս տարի առաջ՝ 1893 թ. մեզ յաջուցուց այցելել Թիւրքիայի մի քանի քաղաքները: Ո՞րքան մօտից էինք ծանօթանում այն տեղերում տիրող կարգ ու սարքի հետ, այնքան մեր մէջ ամրանում էր այն համոզմունքը, որ ուտից մինչև զլուխ փոտել, նեխուել է Թիւրքիան:

Ամեն քայլափոխում ամեն ինչ ասում էր, որ տիրող ընդհանուր դրութիւնը չի կարող այլևս երկար շարունակուել և թէ Թիւրքիայի, որպէս մի անկախ պետութեան՝ օրերը արդէն հաշուած են: Պէտք է աւելացնենք որ Թիւրքիայի մասին այդ կարծիքը կարելի էր պատահել թէ Եւրոպայում և թէ նոյն իսկ Թիւրքիայում: Այն ժամանակ ինձ թում էր, որ Թիւրքիայի մօտարում անկման մասին էլ չի կարող լինել երկու տարրեր կարծիք:

Բայց ժամանակը արագ ընթանում էր և քաղաքական անցքերը Թիւրքիայում քանի գնում սոսկալի կերպարանք էին ստանում: Եւրոպական առաջադէմ մամուլը ամեն օր յայտարարում էր հասարակութեանը Թիւրքիայի մնանկութեանը մասին, աւելի և նրա մօտալուտ բաժանման մասին. և, սակայն ոչ Թիւրքիայի բաժանումը, ոչ էլ պաշտօնական մնանկութեան փոթորիկը անցաւ այդ պետութեան վրայով: Ո՞րքան աւելի արևելքի քաղաքական հորիզոնի